

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Զ. — ՇՐՋԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԳ. ՅՈՒՆԻՍ 30

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռօն օրհնել:

Ս. Միւռօնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Աթոռ և վայելեն Ս. Միւռօնի օրհնութեան շնորհը: